

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Սանկտ Պետերբուրգ, 2009 թվականի դեկտեմբերի 11)

(2010 թվականի մայիսի 21-ի Արձանագրության խմբագրությամբ)

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության (այսուհետ՝ Մաքսային միություն) անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմերը,

նպատակ ունենալով կանխել Մաքսային միության մաքսային տարածքի բնակչության շրջանում վարակիչ եւ ոչ վարակիչ հիվանդությունների (թունավորումների) ներթափանցումն ու տարածումը այնպիսի արտադրանքի (ապրանքների) միջոցով, որը չի համապատասխանում սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենայի պահանջներին,

հիմնվելով «Տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների ոլորտում համաձայնեցված քաղաքականության իրականացման մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի վրա,

ընդունելով բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցությունը ապահովմանը ուղղված համաձայնեցված քաղաքականության իրականացման նպատակահարմարությունը,

հաշվի առնելով Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական կանոնները), (2005 թվական), «Առետրում տեխնիկական արգելքների մասին» համաձայնագիրը եւ Առետրի համաշխարհային կազմակերպության կողմից սահմանված «Սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների կիրառման մասին» համաձայնագիրը, որը ընդունվել է Մարաքեշում 1994 թվականի ապրիլի 15-ի Առետրի բազմակողմ բանակցությունների Ուրուգվայի փուլի արդյունքներով, «Անկախ պետությունների համագործակցության մասնակից երկրների տարածքի սանիտարական պաշտպանության ոլորտում համագործակցության մասին »2001 թվականի մայիսի 31-ի համաձայնագիրը, «Անկախ պետությունների համագործակցության մասնակից երկրներ ներմուծվող պոտենցիալ վտանգավոր արտադրանքի հիգիենիկ վիճակը գնահատելիս երկկողմանի գործողությունների իրականացման կարգի մասին» 2004 թվականի ապրիլի 16-ի համաձայնագիրը,

համաձայնեցին հետեւյալի մասին՝

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հետեւյալ տերմինները.

«արտադրանքի (ապրանքների) անվտանգությունն ապահովող փաստաթուղթ» նշանակում է լիազորված մարմինների կողմից տրամադրվող փաստաթուղթ (պետական գրանցման հավաստագիր), որը հավաստում է սանիտարահամաճարակաբանական հսկողության (վերահսկողության) ենթակա արտադրանքի (ապրանքների) համապատասխանությունը մարդու առողջության անվտանգության պահանջներին,

(2010 թվականի մայիսի 21-ի Արձանագրության խմբագրությամբ)

«սանիտարահամաճարակաբանական վերահսկողություն (հսկողություն)» նշանակում է լիազորված մարմինների գործունեությունն ուղղված բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ոլորտում Կողմ պետությունների օրենսդրությամբ եւ Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով սահմանված պարտադիր պահանջների խախտումների կանխմանը, հայտնաբերմանը եւ կանխարգելմանը:

«սանիտարահակահամաճարակաբանական միջոցառումներ» նշանակում է կազմակերպավարչական, ինժեներատեխնիկական, բժշկասանիտարական եւ այլ միջոցառումներ, որոնք ուղղված են մարդու առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների վնասակար ազդեցության ռիսկի գնահատմանը, այդ ռիսկի վերացմանը կամ նվազեցմանը, վարակիչ եւ զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների (թունավորումների) առաջացման ու տարածման կանխարգելմանը եւ դրանց վերացմանը,

«հսկողության ենթակա ապրանքներ» նշանակում է մարդու առողջության համար վտանգ ներկայացնող ապրանքներ, քիմիական, կենսաբանական եւ ռադիոակտիվ նյութեր, թափոններ եւ այլ բեռներ, Մաքսային միության մաքսային տարածքով եւ այդ տարածքում տեղաշարժվող սննդամթերք, նյութեր եւ արտադրատեսակներ, որոնք Կողմ պետությունների օրենսդրության համապատասխան ենթակա են պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության),

«լիազոր մարմիններ» նշանակում է Կողմ պետությունների մարմիններն ու հաստատությունները, որոնք լիազորված են բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ոլորտում գործելու համար:

Սույն Համաձայնագրում հատուկ չսահմանված հասկացությունները կիրառվում են մաքսային միության շրջանակներում կնքված այլ միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի գործունեությունը տարածվում է անձանց, փոխադրամիջոցների, ինչպես նաեւ մաքսային սահմանում եւ Մաքսային միության մաքսային տարածքում սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա ապրանքների միասնական ցանկում (այսուհետ՝ Ապրանքների միասնական ցանկ) ընդգրկված՝ հսկողության ենթակա ապրանքների վրա:

Մաքսային սահմանում եւ Մաքսային միության մաքսային տարածքում սանիտարահամաճարակաբանական վերահսկողությունը (հսկողությունը) իրականացվում է համաձայն «Մաքսային միության մաքսային սահմանը հատող անձանց եւ փոխադրամիջոցների, Մաքսային միության մաքսային սահմանով եւ Մաքսային միության մաքսային տարածքով տեղաշարժվող՝ հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) իրականացման մասին կարգի» (այսուհետ՝ Կանոնակարգ սանիտարահամաճարակաբանական վերահսկողության կարգի մասին):

Մաքսային միության մաքսային տարածում կիրառվում են սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա ապրանքների նկատմամբ սահմանվող միասնական սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենայի պահանջները (այսուհետ՝ Միասնական սանիտարական պահանջներ): Միասնական սանիտարական պահանջները գործում են մինչեւ տվյալ տեսակի հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի տեխնիկական կանոնակարգերի ընդունումը:

(2010 թվականի մայիսի 21-ի Արձանագրության խմբագրությամբ)

Սույն Համաձայնագրի կատարման նպատակներով Կողմերը.

- ճանաչում են Միասնական սանիտարական պահանջներին հսկողության ենթակա ապրանքների համապատասխանությունը որոշելու ուղղությամբ լիազորված մարմինների կատարած աշխատանքների արդյունքները,

- ընդունում են համաձայնեցված միջոցառումներ, որոնք ուղղված են Մաքսային միության մաքսային տարածքում վարակիչ եւ զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների (թունավորումների) ներթափանցման եւ տարածման, մարդու առողջության համար վտանգավոր արտակարգ իրավիճակների հետեւանքների, ինչպես նաեւ կենսաբանական ազդակների, քիմիական եւ ռադիոակտիվ նյութերի կիրառմամբ՝ ահաբեկչական գործողությունների կանխմանն ու վերացմանը,

- իրականացնում են սանիտարահակահամաճարակաբանական միջոցառումներ մարդու կյանքի եւ առողջության եւ շրջակա միջավայրի համար վտանգավոր՝ հսկողության ենթակա ապրանքների ներթափանցումը Մաքսային միության մաքսային տարածք եւ դրանց ապրանքաշրջանառությունը արգելելու համար:

Հոդված 3

Կողմերն անհատների, փոխադրամիջոցների, հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ իրականացնում են սանիտարահամաճարակաբանական վերահսկողություն (հսկողություն)՝ Մաքսային միության մաքսային սահմանով դրանց տեղաշարժման ժամանակ, Մաքսային միության մաքսային սահմանին տեղակայված Կողմ պետությունների անցակետերում:

Կողմերը Մաքսային միության մաքսային սահմանով տեղաշարժման համար նախատեսված անցակետերում բացում են սանիտարակարանտինային կետեր եւ միջոցներ են ձեռնարկում անհրաժեշտ սանիտարահակահամաճարակաբանական միջոցառումների անցկացման համար:

Մաքսային միության հանձնաժողովը սահմանում է հսկողության ենթակա այն ապրանքների ցանկը, որոնց տեղաշարժը մաքսային միության մաքսային սահմանով իրականացվում է իրենց օրենսդրության համաձայն համապատասխան կողմերի սահմանած հատուկ սարքավորումներով զինված անցակետերում:

Հոդված 4

Լիազորված անձինք փոխանակում են արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերի նմուշներ, որոնք ձեւակերպվում են Միասնական ձեւաչափերով եւ դրանք տրամադրող մարմինների եւ հաստատությունների ցանկերով:

Հոդված 5

Մաքսային միության մաքսային տարածք հսկողության ենթակա ապրանքների ներկրումը եւ շրջանառությունը իրականացվում է արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում:

Կողմերը առանց վերաձեւակերպման ընդունում են լիազորված մարմինների կողմից միասնական ձեւաչափով տրամադրված եւ ԵվրԱզԷՍ-ի Միասնական սանիտարական պահանջներին եւ տեխնիկական կանոնակարգերին համապատասխանող, ապրանքների միասնական ցանկում ընդգրկված արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերը:

(2010 թվականի մայիսի 21-ի Արձանագրության խմբագրությամբ)

Արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող այն փաստաթղթերը, որոնք ձեւակերպվել են լիազորված անձանց կողմից նախքան սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը՝ գործում են մինչեւ տվյալ փաստաթուղթը տրամադրած Կողմ պետության տարածքում դրանց գործողության ժամկետի ավարտը:

Պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ընթացքում ԵվրԱզԷՍ-ի Միասնական սանիտարական պահանջներին կամ տեխնիկական կանոնակարգերին չհամապատասխանող հսկողության ենթակա ապրանքներ հայտնաբերելիս՝ Կողմերը ձեռնարկում են միջոցներ՝ «Սանիտարահամաճարակաբանական վերահսկողության կարգի մասին» կանոնակարգի համաձայն: Կողմերը իրավասու են արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթեր տրամադրած լիազորված անձանցից պահանջել այն լաբորատոր հետազոտությունների (փորձարկումների) արձանագրությունները, որոնց հիման վրա տրամադրվել էին տվյալ փաստաթղթերը:

(2010 թվականի մայիսի 21-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 6

Ապրանքների միասնական ցանկը, սանիտարահամաճարակաբանական վերահսկողության կարգի մասին Կանոնակարգը, Միասնական սանիտարական պահանջները եւ արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերի միասնական ձեւաչափերը հաստատվում են Մաքսային միության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ:

Հանձնաժողովը՝ Կողմ պետությունների կողմից համապատասխան լիազորություններ ստանալու օրվանից սկսած՝ վարում է սույն հոդվածի առաջին մասում նշված փաստաթղթերը:

Սույն հոդվածի նպատակներից ելնելով՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթերի վարում ասելով հասկանում ենք սույն հոդվածի առաջին մասում նշված փաստաթղթերում սահմանված կարգով փոփոխությունների եւ լրացումների կատարումը, դրանց հետագա հաստատումը եւ Կողմերին այդ մասին ծանուցումը:

Սույն հոդվածի առաջին մասում նշված փաստաթղթերում փոփոխությունների եւ լրացումների կատարման մասին առաջարկությունները Հանձնաժողովի քննարկմանն են ներկայացվում սահմանված կարգով, եւ ներառում են նաեւ Կողմ պետությունների լիազորված մարմինների կողմից կատարված առաջարկությունները:

Հոդված 7

Վարակիչ եւ զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների (թունավորումների) հայտնաբերման եւ (կամ) Մաքսային միության մաքսային տարածքում հետեւյալի տարածման դեպքերում.

- բնակչության շրջանում վարակիչ եւ զանգվածային ոչ վարակիչ հիվանդություններ (թունավորումներ),

- մարդու կյանքի, առողջության եւ շրջակա միջավայրի համար վտանգավոր արտադրանք,

- լիազորված մարմինները դրանց, ինչպես նաեւ դրանց նկատմամբ ձեռնարկված սանիտարական միջոցների մասին տեղեկությունները ուղարկում են Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ

բուսասանիտարական միջոցների ոլորտի Տեղեկատվական համակարգ, որը ստեղծում է «Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների ոլորտում Տեղեկատվական համակարգ ստեղծելու մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագրին համապատասխան, եւ Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առետրի Ինտեգրված տեղեկատվական համակարգ, որը ստեղծվում է Եվրասիական տնտեսական համայնքի միջպետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 22 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առետրի Ինտեգրված տեղեկատվական համակարգի ձեւավորման հայեցակարգին համապատասխան:

Լիազորված մարմինները բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ոլորտում ցուցաբերում են գիտամեթոդական եւ տեխնիկական փոխադարձ օժանդակություն եւ տեղեկացնում միմյանց.

- ԵվրԱզԷՍ-ի Միասնական սանիտարական պահանջներին կամ տեխնիկական կանոնակարգերին չհամապատասխանող հսկողության ենթակա ապրանքների հնարավոր ներսերման մասին,

(2010 թվականի մայիսի 21-ի Արձանագրության խմբագրությամբ)

- Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոններում (2005 թվական) ներկայացված հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների եւ մարդու կյանքի եւ առողջության համար վտանգավոր արտադրանքի հայտնաբերման յուրաքանչյուր դեպքի մասին:

Հոդված 8

Սանիտարական միջոցառումների ոլորտում Մաքսային միության օրենսդրության պահպանման, եւ վարակիչ եւ զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների (թունավորումների), ինչպես նաեւ սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենայի պահանջներին չհամապատասխանող հսկողության ենթակա ապրանքների ներթափանցումից եւ տարածումից Մաքսային միության մաքսային տարածքը զերծ պահելու նպատակներով, եւ այլ խնդիրների արդյունավետ լուծման համար՝ լիազորված մարմինները անհրաժեշտության դեպքում եւ փոխադարձ համաձայնությամբ, հսկողության ենթակա

ապրանքները արտադրող Կողմ պետությունների տարածքներում իրականացնում են համատեղ ստուգումներ (տեսչական ստուգումներ):

Սույն Համաձայնագրի կատարման հետ կապված ֆինանսական ծախսերը իրականացվում են Կողմ պետությունների համապատասխան բյուջեներից, եթե յուրաքանչյուր առանձին դեպքում այլ կարգ չի սահմանվում:

Հոդված 9

Կողմերը իրավասու են ժամանակավոր սանիտարական միջոցներ ձեռնարկել եւ սանիտարահամաճարակաբանական միջոցառումներ անցկացնել, եթե.

- Կողմ պետության տարածքում վատթարացել է սանիտարահամաճարակաբանական իրավիճակը,

- համապատասխան միջազգային կազմակերպություններից, սույն Համաձայնագրի կողմ չհանդիսացող Կողմերից կամ պետություններից ստացվել է տեղեկատվություն կիրառվող սանիտարական միջոցների եւ (կամ) սանիտարահամաճարակաբանական իրավիճակի վատթարացման մասին,

- սանիտարական միջոցների կիրառման համապատասխան գիտական հիմնավորումը անբավարար է կամ չի կարող ներկայացվել անհրաժեշտ ժամկետներում,

- հայտնաբերվել են ԵվրԱզԷՍ-ի Միասնական սանիտարական պահանջներին կամ տեխնիկական կանոնակարգերին չհամապատասխանող հսկողության ենթակա ապրանքներ:

(2010 թվականի մայիսի 21-ի Արձանագրության խմբագրությամբ)

Կողմերը հնարավորինս կարճ ժամկետում միմյանց տեղեկացնում են սանիտարական միջոցներ սահմանելու, սանիտարահամաճարակաբանական միջոցառումների անցկացման եւ դրանցում փոփոխություններ կատարելու մասին:

Եթե Կողմերից մեկը ժամանակավոր սանիտարական միջոցներ է սահմանել, ապա մյուս Կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ եւ անցկացնում սանիտարահամաճարակաբանական միջոցառումներ՝ այդպիսի միջոցների սահմանման մասին որոշում ընդունած Կողմի համար պաշտպանության պատշաճ մակարդակ ապահովելու նպատակով:

Հոդված 10

Կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Եթե վեճը չի կարգավորվում խորհրդակցությունների ու բանակցությունների անցկացման վերաբերյալ վեճի Կողմերից մեկի կողմից մյուսին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, ապա վեճի Կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 11

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է 2007 թվականի հոկտեմբերի 6-ի «Մաքսային միության պայմանագրաիրավական հիմքի ձեւավորմանը միտված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» արձանագրությամբ:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2009 թվականի դեկտեմբերի 11-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կտրամադրի իր վավերացված օրինակը:

Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից (ստորագրություն)	Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից (ստորագրություն)	Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից (ստորագրություն)
---	--	---